

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՕՂԱԿԱՐՈՒԿՆԵՐԻ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՄԻՋՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ¹

ՄԱՐԻԱՄ ՇԱԽՄՈՒՐԱԴՅԱՆ

պատ. գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և
ազգագրության ինստիտուտ
mariam.shakhmuradyan@gmail.com

ՀՏԴ՝ 902; 902/904; 902.2
DOI: 10.54503/1829-4278.2025.1-104

Ամփոփագիր

Սույն հոդվածում քննվում են Հայաստանում հայտնաբերված «*օղապարուկներ*» կոչվող հնագիտական հուշարձանների կառուցվածքային առանձնահատկությունները և տեսակները՝ Առաջավոր և Միջին Ասիայում փաստագրված նույնատիպ հուշարձանների համատեքստում: Հիմնվելով դաշտային աշխատանքների, ինչպես նաև տարբեր տարածաշրջանների «*օղապարուկների*» արբանյակային և օդային լուսանկարների ուսումնասիրության վրա՝ հոդվածում ներկայացվում են այս շինությունների կառուցվածքային տարրերի (քարաշարեր, մուտք, շրջապարիսպ, աշտարակներ) ձևաբանական հատկանիշները և դրանց դրսևորումները Հայաստանում: Առաջին անգամ ներկայացվում են Հայաստանի օղապարուկների հիմնական տեսակները՝ ըստ շրջապարիսպների ձևերի: Հայաստանյան օրինակներն այլ տարածաշրջաններում հայտնաբերված նույնատիպ շինությունների համատեքստում դիտարկելով՝ ուսումնասիրությունը նպատակ ունի պարզելու, թե արդյո՞ք վերջիններս առանձին տարածաշրջանային տիպաբանական խմբաքանակ են կազմում, թե՞ զուգահեռներ ունեն նաև այլ տարածաշրջաններում և առավել լայն աշխարհագրական տարածում ունեցող շինարարական ավանդույթի մաս են կազմում: Հայաս-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳԱՄՍ գիտության կոմիտեի, «Rust» ընտանեկան հիմնադրամի (Rust Family Trust), Հայագիտական հետազոտությունների ազգային ընկերության (National Association for Armenian Studies and Research), «Վարդանի ասպետներ» և «Նուբար Փաշա» հիմնադրամների (Knights of Vartan Fund, Fondation Nubar Pacha) և Հայ օգնության ֆոնդի (Fund for Armenian Relief) ֆինանսավորմամբ՝ «Հայաստանի օղապարուկների հնագիտական ուսումնասիրություն» թեմայի շրջանակներում:

տանը դիտարկվում է որպես առանցքային գոտի՝ օդապարուկների առաջացման, տարածման և դրանց հնարավոր գործառույթի խնդիրների պարզաբանման համար:

Բանալի բառեր. Առաջավոր Ասիա, Հայաստան, օդապարուկ, մեզալիթյան հուշարձան, նախաքրիստոնեական ժամանակաշրջան, կառուցվածք, քարաշար, շրջապարիսպ, աշտարակ, համեմատական քննություն

Սույնք

Վերջին տասնամյակներին հնագիտության մեջ լայն տարածում է ստացել արբանյակային լուսանկարների և անօդաչու թռչող սարքերի կիրառումը, որոնք անհամեմատ հեշտացրել են նոր հնավայրերի հայտնաբերման և բազմակողմանի ուսումնասիրության գործընթացը, իսկ որոշ տեսակի հուշարձանների ուսումնասիրությունն առանց դրանց գրեթե անհնար կլիներ: Դրանց թվին են պատկանում, այսպես կոչված, «*օդապարուկները*» (անգլ.² *kites*), որոնք հսկայական չափերի պատճառով հիմնականում արբանյակային և օդային լուսանկարների վրա են ամբողջապես տեսանելի:

Օդապարուկները մեծ չափերի քարաշեն կառույցներ են, որոնք կազմված են երկար զուգամիտող քարաշարերից², մուտքից, շրջապարսպից և վերջինիս արտաքին կողմից կցված աշտարակներից³ (նկ. 1, 2): Շրջապարիսպներն ունեն տարբեր ձևեր, որոնց մի մասը երկրաչափական են (ուղղանկյուն, եռանկյունի, շրջան և այլն), իսկ մյուս մասն անկանոն հատակագծով ձևեր են, որոնք երբեմն տարբեր առարկաների պատկերներ են հիշեցնում: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ որոշ օդապարուկներին հատուկ անվանումներ են տրվել. սլաքաձև, աստղաձև, կացնաձև, սրտաձև և այլն⁴:

² Քարաշարերը, սովորաբար, երկուսն են, սակայն կախված տարածաշրջանից՝ կարող են նաև ավելի շատ կամ քիչ լինել: Տե՛ս **Barge O. et al.**, Morphological Diversity and Regionalization of Kites in the Middle East and Central Asia, *Arabian Archaeology and Epigraphy*, 26/2, 2015a, p.162–176, Idem, Unity and Diversity of the Kite Phenomenon: a Comparative Study between Jordan, Armenia, and Kazakhstan, *Arabian Archaeology and Epigraphy*, 26, 2015b, p. 144–161.

³ Գրականության մեջ օդապարուկների կառուցվածքային տարրերը տարբեր անվանումներով են բնորոշվում, և դեռևս միասնական տերմինաբանություն չի մշակվել: Քարաշարերը կոչվում են նաև *անտենա*, *պեհավաք* (անգլ.³ *antenna*), *պոչ* (անգլ.³ *tail*), *ուղղորդող բազուկներ* (անգլ.³ *guiding arms*), *ուղղորդող պատեր* (անգլ.³ *guiding walls*), *շրջապարիսպը՝ գլուխ* (անգլ.³ *head*), *աշտարակները՝ բջիջ* (անգլ.³ *cell*), *թաքստոց* (անգլ.³ *hide*), *փոս-թակարդ* (անգլ.³ *pit-trap*), *խուց* (ֆրանս.³ *logette*): Տե՛ս **Շախմուրադյան Ա.**, «*Մնապատի օդապարուկների*» կառուցվածքը, ձևերը, թվագրությունը և գործառույթը, պատ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն (անտիպ), Երևան, 2023, էջ 32–33:

⁴ **Ягодин В.**, Стреловидные планировки Устюрта (опыт историко-культурной интерпретации), *Археология Приаралья*, вып. 5, Ташкент: Фан, 1991, 203 с., **Helms S., Betts A.**, The Desert “Kites” of the Badiyat Esh-Sham and North Arabia, *Paléorient*, 13/1, 1987, p. 50,

Առաջին անգամ օդապարուկները հայտնաբերվել են 20-րդ դարասկզբին Սիրիայի և Հորդանանի անապատներում՝ առաջին աշխարհամարտի մասնակից օդաչուների կողմից⁵: Օդաչուներից մեկը, այդ կառույցների արտաքին տեսքը նմանեցնելով խաղալիք օդապարուկներին, դրանք անվանեց «*օդապարուկներ*» (*անգլ. 'kites'*)⁶: Այդ անվանումը լայն ընդունելություն գտավ գիտական շրջանակներում և շարունակում է գործածվել մինչ օրս: Քանի որ այս կառույցներն առաջին անգամ հայտնաբերվել են անապատում, դրա համար դրանք հաճախ կոչվում են «*անապատի օդապարուկներ*»:

Դեռևս ոչ վաղ անցյալում միայն մի քանի հարյուր օդապարուկներ էին հայտնի Սիրիայի և Հորդանանի անապատներում, մինչդեռ արբանյակային լուսանկարների շնորհիվ ներկայումս աշխարհում հայտնի են դարձել 6000-ից ավել օդապարուկներ⁷: Դրանք հայտնաբերվել են միայն Առաջավոր և Միջին Ասիայում՝ որոշակի երկրների տարածքներում (Հայաստան, Իրաք, Թուրքիա, Սիրիա, Հորդանան, Լիբանան, Սաուդյան Արաբիա, Ուգրեկստան, Ղազախստան, Թուրքմենստան (նկ. 3): Հայաստանում այս կառույցները փաստագրվել են Արագածոտնի, Արմավիրի և Շիրակի մարզերում՝ ընդհանուր շուրջ 200 միավոր⁸:

Գրականության մեջ երբեմն նշվում է, որ օդապարուկներ հայտնաբերվել են նաև Իսրայելում, Եգիպտոսում, Հյուսիսային և Հարավային Աֆրիկայում, Յեմենում և այլուր⁹, սակայն այդ տարածաշրջաններում

Échallier J., Braemer F., Nature and Functions of the Desert Kites: New Data and Hypothesis, *Paléorient*, 21, 1995, p. 45, **Malkinson D. et al.**, Seasonal Use of Corrals and Game Traps (Desert Kites) in Armenia, *Quaternary International*, 464, 2018, p. 287, **Kennedy D.**, Kites – New Discoveries and a New Type, *Arabian Archaeology and Epigraphy*, 23, 2012, p. 148, **Kennedy D.**, Kites in Saudi Arabia, *The Gazelle's Dream: Game Drives of the Old and New Worlds*, Sydney: Sydney University Press, 2021, fig. 9.7, **Շախսնորայան Ս.**, «*Անապատի օդապարուկներ*» ..., էջ 38–39:

⁵ **Holt A.**, The Future of the North Arabian Desert, *The Geographical Journal*, 62/4, 1923, p. 259–268, **Maitland P.**, The 'Works of the Old Men' in Arabia, *Antiquity*, 1, 1927, p. 197–203., **Rees L.**, The Transjordan Desert, *Antiquity*, 3, 1929, p. 389–407, **Dussaud R.**, Les relevés du Capitaine Rees dans le désert de Syrie, *Syria*, 10, 1929, p. 144–163, **Crawford O.**, Notes by Editor, *Antiquity*, 3, 1929, p. 400–401, **Poidebard A.**, Reconnaissance aérienne au Ledja et au Safa, *Syria*, 9, 1928, p. 114–132.

⁶ **Rees L.**, The Transjordan Desert..., p. 395.

⁷ Տե՛ս *Globalkites* նախագծի քարտեզը հետևյալ հղումով <https://www.globalkites.fr/Interactive-map>

⁸ **Շախսնորայան Ս.**, «*Անապատի օդապարուկներ*»..., էջ 18–25, 134–138, **Barge O. et al.**, Hunting with Kites in Armenia, *The Gazelle's Dream: Game Drives of the Old and New Worlds*, Sydney: Sydney University Press, 2021a, p. 105–126, **Nadel D. et al.**, New Insights into Desert Kites in Armenia: the Fringes of the Ararat Depression, *Arabian Archaeology and Epigraphy*, 26, 2015, p. 120–143.

⁹ **Holzer A. et al.**, Desert Kites in the Negev Desert and Northeast Sinai: their Function, Chronology and Ecology, *Journal of Arid Environments*, 74, 2010, p. 806–817, **Nadel D. et al.**, Small, Sparse and Effective: the Negev and Sinai Kites, *The Gazelle's Dream: Game Drives of the Old and New Worlds*, Sydney: Sydney University Press, 2021, p. 253–304, **Bar-Oz G., Nadel D.**,

փաստագրված շինությունները որպես «օդապարուկ» անվանակոչված կառույցների հետ էական կառուցվածքային տարբերություններ են ցուցաբերում, ինչը խնդրահարույց է դարձնում վերջիններիս՝ օդապարուկների հետ նույնացումը և նույն անվանումով բնորոշումը¹⁰:

Օդապարուկների մեկդարյա ուսումնասիրության արդյունքում հիմնարար տվյալներ են ձեռք բերվել դրանց աշխարհագրական բաշխվածության, միջավայրի և կառուցվածքային առանձնահատկությունների վերաբերյալ, սակայն առանցքային խնդիրները՝ դրանց գործառույթը և ժամանակագրությունը դեռևս լիարժեք պարզաբանված չեն և գտնվում են ուսումնասիրության վաղ փուլում: Հիմնված Սիրիայի և Հորդանանի օդապարուկների պեղումների և հնագիտական միջավայրի ուսումնասիրության վրա՝ տարածված է այն տեսակետը, որ նշված տարածաշրջաններում օդապարուկները վաղ նոր քարի դարում են սկսել կառուցվել և թվագրվում են մ. թ. ա. 10–8–րդ հազ., իսկ ուշ նոր քարի դարում (մ. թ. ա. 7–6–րդ հազ.) դրանց մի մասն արդեն դուրս է եկել գործածությունից¹¹: Այլ տարածաշրջաններում այս շինությունների թվագրության վերաբերյալ տվյալներն առավել թեական են և առաջարկվել են նոր քարի դարից մինչև միջնադար թվագրություններ¹²: Հայաստանի օդապարուկների և վերջիններիս հնագիտական միջավայրի ուսումնասիրության ներկայիս արդյունքները թույլ են տալիս ենթադրելու, որ դրանց գոյության հիմնական շրջանը կարող էին միջին և ուշ բրոնզի դարերը լինել (մ. թ. ա. 3–2–րդ հազ.), որից հետո դրանք, հավանաբար արդեն երկրորդային կերպով, շարունակել են գործածվել ընդհուպ մինչև միջնադար: Սակայն, հաշվի առնելով Հայաստանից դուրս առկա գուգահեռները, հնարավոր է, որ Հայաստանում նույնպես հնագույն օդապարուկները շատ ավելի վաղ են կառուցվել, որն ապագայում հետազոտելու խնդիր է¹³:

Worldwide Large-Scale Trapping and Hunting of Ungulates in Past Societies, *Quaternary International*, 297, 2013, p. 1–7, **Lombard M. et al.**, The Keimos 3 Desert Kite site, South Africa: An Aerial Lidar and Micro-Topographic Exploration, *Antiquity*, 94/373, 2020, p.197–211. **Skorupka M.**, Les “desert kites” yéménites, *Arabian Humanities*, 16, 2010, p. 5–14.

¹⁰ **Շախմուրադյան Ս.**, «Անապատի օդապարուկների»..., էջ 43–45; **Barge O. et al.**, Morphological Diversity..., p. 164–165.

¹¹ **al Khasawneh S. et al.**, Dating a Near Eastern Desert Hunting Trap (Kite) Using Rock Surface Luminescence Dating, *Archaeological and Anthropological Sciences*, 11/5, 2019, p. 2109–2119, **Morandi Bonacossi D., Iamoni M.**, The Early History of the Western Palmyra Desert Region. The Change in the Settlement Patterns and the Adaptation of Subsistence Strategies to Encroaching Aridity: A First Assessment of the Desert Kite and Tumulus Cultural Horizons, *Syria*, 89, 2012, p. 31–58, **Betts A., Burke D.**, Desert Kites in Jordan: A New Appraisal, *Arabian Archaeology and Epigraphy*, 26, 2015, p. 75, **Akkermans P., Huigens H., Brüning M.**, A Landscape of Preservation: Late Prehistoric Settlement and Sequence in the Jebel Qurma region, Northeastern Jordan, *Levant*, 46/2, 2014, p. 188–190.

¹² **Շախմուրադյան Ս.**, «Անապատի օդապարուկների»..., էջ 75–80:

¹³ Նույն տեղում, էջ 50–55, 60–63, 75–77:

Օդապարուկների գործառույթի վերաբերյալ առաջարկվել են տարբեր տեսակետներ: Ամենից տարածված կարծիքն այն է, որ դրանք որոգայթի դեր են տարել վայրի կձղակավոր անասունների և, հատկապես, վիթերի հոտ որսալու համար¹⁴: Կարծիքներ են արտահայտվել, որ դրանք կարող էին նաև անասնապահական կամ պաշտամունքային նշանակություն ունենալ¹⁵: Տարբեր տեսակետների գոյության և խնդրի չլուծված լինելու հիմնական պատճառը օդապարուկներում հայտնաբերված գտածոների խիստ սակավությունն է, ինչը նյութական մշակույթի մնացորդների հիման վրա հիմնարար վերլուծություններ և դատողություններ կատարելու հնարավորություն չի ընձեռում: Առաջարկված բոլոր տեսակետները հիմնված են երկրորդային փաստարկների և այլ շինությունների հետ համեմատական քննությունների վրա¹⁶:

Ուսումնասիրության խնդիրը և նպատակները

Հայաստանում օդապարուկների ուսումնասիրությունը միայն վերջերս է սկսվել՝ 2009 թվականից, երբ երկրաբան Ա.Կարախանյանը հայտնաբերեց դրանք¹⁷ և այդ մասին հայտնեց ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտին: Դրանից հետո սկսվեց այս կառույցների համակարգված ուսումնասիրությունը հայ-ֆրանսիական¹⁸,

¹⁴ Crawford O., Notes by Editor..., p. 400–401, Helms S., Betts A., The Desert “Kites” ..., p. 41–67, Legge A., Rowley-Conwy P., Gazelle Killing in Stone Age Syria, *Scientific American*, 1987, p. 88–95, Rosen B., Perevolotsky A., The Function of “Desert Kites” – Hunting or Livestock Husbandry?, *Paléorient*, 24, 1998, p. 107–111, Kempe S., Al-Malabeh A., Desert Kites in Jordan and Saudi Arabia: Structure, Statistics and Function, a Google Earth Study, *Quaternary International*, 297, 2013, p. 126–14, Zeder M. et al., New Perspectives on the Use of Kites in Mass-Kills of Levantine Gazelle: A View from Northeastern Syria, *Quaternary International*, 05/297, 2013, p. 110–125, Bar-Oz G., Nadel D., Worldwide Large-Scale ..., p. 1–7, Barge O. et al., Hunting with Kites..., p. 105–126, Crassard R. et al., The Use of Desert Kites as Hunting Mega-Traps: Functional Evidence and Potential Impacts on Socioeconomic and Ecological Spheres, *Journal of World Prehistory*, 35, 2022, p. 1–44.

¹⁵ Maitland P., The ‘Works of the Old Men’..., p. 197–203., Rees L., The Transjordan Desert ..., p. 389–407, Kirkbride A., Desert ‘Kites’, *Journal of the Palestine Oriental Society*, 20, 1946, p. 1–5, Échallier J., Braemer F., Nature and Functions ..., p. 45, Malkinson D. et al., Seasonal Use..., p. 287, Kobusiewicz M., Excavations at Sinai–10: the Kite Site, Romythi locality, *An Archaeological Investigation of the Central Sinai, Cairo: American Research Center in Egypt*, 1999, p. 173–180, Shakhmuradyan M., The Desert Kites: A New Frontier in the Near Eastern Archaeology, *Proceedings of the Cambridge Annual Student Conference*, Oxford: Archaeopress, 2020a, p. 245–261, Շախմուրադյան Մ., «Անապատի օդապարուկները»..., էջ 109–111:

¹⁶ Shakhmuradyan M., The Function of Desert Kites: An Analysis of Hunting Theory, *Aramazd*, XIV/1–2, 2020b, p. 1–26, Շախմուրադյան Մ., «Անապատի օդապարուկները» ..., էջ 82–111:

¹⁷ Karakhanyan A., *Seismic hazard assessment for the construction site of a new power unit of the Armenian NPP*, WP 6. Assessment of surface faulting potential, final report. Unpublished report, Archive of the Ministry of Energy and Management of the Interior of the Republic of Armenia, and Archives of the IAEA, 2010.

¹⁸ Brochier J.-É. et al., Kites on the Margins: the Aragats Kites in Armenia, *Paléorient*, 40/1, 2014, p. 25–53, Barge O. et al., Unity and Diversity..., p. 144–161, Chahoud J. et al., The Diversity

հայ-խորայելական¹⁹ և հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբերի կողմից²⁰: Իրականացված հետազոտությունների արդյունքում տվյալներ են ձեռք բերվել Հայաստանում այս կառույցների բաշխվածության, հնագիտական միջավայրի, ինչպես նաև հնարավոր ժամանակագրական շրջանակի մասին: Քննարկվել են նաև վերջիններիս կառուցվածքային հատկանիշները և առանձնացվել հիմնական բնորոշիչ գծերը²¹:

Սույն ուսումնասիրության նպատակը Հայաստանի օդապարուկների կառուցվածքային հատկանիշների և տեսակների առավել մանրակրկիտ և բազմակողմանի ուսումնասիրությունն է՝ հիմնված շուրջ 200 օդապարուկների դաշտային հետազոտությունների վրա: Հատկապես ուշադրություն է դարձվել օդապարուկների շրջապարիսպների ձևերի ներկայացմանը, ինչին նախկինում առանձին անդրադարձ չի եղել:

Ուսումնասիրության մյուս նպատակը Հայաստանի օդապարուկների կառուցվածքային հատկանիշների դիտարկումն է աշխարհի այլ տարածաշրջանների օդապարուկների համատեքստում՝ հասկանալու, թե արդյո՞ք հայաստանյան օրինակները առանձին տարածաշրջանային տիպաբանական խումբ են, թե՞ զուգահեռներ ունեն նաև այլ տարածաշրջաններում և առավել լայն աշխարհագրական տարածում ունեցող շինարարական ավանդույթի մասն են: Դա իր հերթին հնարավորություն կտա առավել լիարժեք պատկերացում կազմել օդապարուկների տարածաշրջանային առանձնահատկությունների, դրանց առաջացման, զարգացման և տարածման դինամիկայի մասին, ինչպես նաև առավել լայն տվյալների հենքի հիման վրա քննարկել վերջիններիս գործառույթի և ժամանակագրության խնդիրները:

of Late Pleistocene and Holocene Wild Ungulates and Kites Structures in Armenia, *Quaternary International*, 395, 2016, p. 133–153, **Barge O. et al.**, Hunting with Kites..., p. 105–126, **Barge O. et al.**, Desert kites and Aggregated Cells of Mt Aragats (Armenia): Spatial Coincidences? *Quaternary International*, 579, 2021b, p. 29–41.

¹⁹ **Gasparian B. et al.**, The Northernmost Kites in South–West Asia: the Fringes of the Ararat Depression (Armenia), *Antiquity*, 87/336, 2013, **Nadel D. et al.**, New Insights into Desert Kites in Armenia: the Fringes of the Ararat Depression, *Arabian Archaeology and Epigraphy*, 26, 2015, p. 120–143, **Malkinson D. et al.**, Seasonal Use..., p. 285–304.

²⁰ **Շախնուրադյան Ս.**, *Արագածականի պեղումները (2018, 2023 թթ.)*, Դաշտային հնագիտական աշխատանքների հաշվետվություն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության արխիվ, **Շախնուրադյան Ս.**, *Թլիկի պեղումները (2021, 2023 թթ.)*, Դաշտային հնագիտական աշխատանքների հաշվետվություն, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության արխիվ, **Շախնուրադյան Ս.**, «Անապատի օդապարուկների» կառուցվածք..., 226 էջ:

²¹ **Barge O. et al.**, Morphological Diversity..., p.162–176, **Barge O. et al.**, Unity and Diversity..., p. 144–161, **Շախնուրադյան Ս.**, «Անապատի օդապարուկների» կառուցվածքի և ձևերի քննություն, *Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ*, հ. 3, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 2019, էջ 21–35:

Օդապարուկների կառուցվածքը. ընդհանուր բնութագիր

Օդապարուկները մեծ չափերի քարաշեն կառույցներ են, որոնք ունեն չորս *հիմնական* կառուցվածքային բաղադրիչ. 1. քարաշարեր, 2. մուտք, 3. շրջապարիսպ, 4. աշտարակներ: Քարաշարերը զուգամիտելով՝ ուղղորդում են դեպի շրջապարիսպը, որին արտաքին կողմից կցակառուցված են աշտարակները (նկ. 1, 2):

Քարաշարերը

Քարաշարերն աննշակ քարերի ցածր, հոծ շարքեր են, որոնց բարձրությունը, սովորաբար կազմում է մի քանի տասնյակ սանտիմետր, իսկ երկարությունը՝ մի քանի տասնյակ մետրից կարող է հասնել մինչև մի քանի կիլոմետրի (նկ. 6 ա, բ)²²: Շարվածքը կարող է լինել և՛ միաշար, և՛ երկշար: Կախված բնական միջավայրից՝ երբեմն դրանք կազմված են իրարից որոշակի հեռավորության վրա դրված մանր քարերից կամ քարահողային լիցքից, ինչպես օրինակ Ուստյուրտի սարահարթի (Ուզբեկստան, Ղազախստան) նմուշները ²³:

Քարաշարերը, սովորաբար, երկուսն են, սակայն կարող են նաև երեք կամ ավել լինել (նկ. 6 ե, գ), որը հատկապես բնորոշ է հարավային տարածաշրջանների (Սիրիա, Հորդանան) օդապարուկներին: Լինում են նաև դեպքեր, երբ օդապարուկը միայն մեկ քարաշար ունի, կամ առհասարակ չունի, որն առավել բնորոշ է ուստյուրտյան նմուշներին²⁴: Մնացած տարածաշրջաններում դա հիմնականում պայմանավորված է պահպանվածության վատ աստիճանով:

Քարաշարերի ծայրերին երբեմն կարող են կցակառուցված լինել մեկական ավելի փոքր չափերի շրջապարիսպներ, որը հիմնականում հարավային տարածաշրջաններում է նկատվում²⁵: Դրանց վրա երբեմն նաև դամբարաններ են կառուցված, ինչը որպես միջոց է կիրառվել օդապարուկների կառուցման վերին ժամանակագրական սահմանը պարզաբանելու համար²⁶: Սակայն ինքնին խնդիրը դեռևս մեկնաբանություն չի ստացել, թե ինչու, շրջակա ազատ տարածություն-

²² **Barge O. et al.**, Morphological Diversity..., fig. 5, **Barge O. et al.**, Unity and Diversity..., p. 148, fig. 11.

²³ Նույն տեղում, էջ 11, նկ. 6,7,13.

²⁴ **Barge O. et al.**, The “Desert Kites” of the Ustyurt Plateau, *Quaternary International*, 395, 2016, p.8, 12, fig. 3

²⁵ **Chambrade M.-L., Betts A.**, Kites of Syria, Southern Turkey and Western Iraq, *The Gazelle’s Dream: Game Drives of the Old and New Worlds*, Sydney: Sydney University Press, 2021, fig. 5.6, 5.9.

²⁶ **Morandi Bonacossi D., Iamoni M.**, The Early History ..., p. 31–58, **Morandi Bonacossi D.**, Desert-Kites in an Aridifying Environment. Specialised Hunter Communities in the Palmyra Steppe during the Middle and Late Holocene, *Studia Chaburensia*, 4, 2014, p. 33–47, **Chambrade M.-L., Betts A.**, Kites of Syria ..., fig. 5.6.

նը թողնելով, դամբարանները կառուցվել են ինքնին օդապարուկի քարաշարերի վրա կամ կից:

Օդապարուկի մուտքը

Օդապարուկների մուտքը մեկն է, որը գտնվում է շրջապարսպի և քարաշարերի միացման կետում (նկ. 2): Տարբեր տարածաշրջաններում մուտքերի տարբեր լայնություններ ունեն՝ մի քանի մետրից հասնելով մինչև հարյուրավոր մետրի²⁷: Հիմնականում չորս տեսակի են լինում: Առաջին տեսակի մուտքը հասարակ բացվածք է (նկ. 4 ա): Երկրորդ տեսակի մուտքը ձևավորվում է շրջապարսպի՝ քարաշարերին հարող պատերի դեպի ներս խորանալու արդյունքում (նկ. 4 բ): Երրորդ տեսակի մուտքն առաջանում է գուգամիտող քարաշարերի՝ շրջապարսպի մեջ խորանալու արդյունքում (նկ. 4 գ): Չորրորդ տեսակը ներկայացնում են փակ մուտքերը (նկ. 4 դ)²⁸:

Շրջապարիսպը

Օդապարուկները, որպես կանոն, մեկ ընդարձակ շրջապարիսպ ունեն (նկ. 5 ա-դ), սակայն որոշ տարածաշրջաններում դրանց քանակը կարող է ավելի լինել: Օրինակ՝ ուստյուրտյան օդապարուկների շրջապարսպի՝ դեպի քարաշարերն ուղղված երկու ծայրերին հաճախ լրացուցիչ փոքր շրջապարիսպներ են կցակառուցված²⁹: Սաուդյան Արաբիայի օդապարուկների հիմնական շրջապարսպին երբեմն մի քանի կողմերից ու մի քանի մակարդակներով կցակառուցված են նույն ձևի և չափերի շրջապարիսպներ (նկ. 5 ե, գ)³⁰:

Շրջապարիսպները անմշակ քարերի չոր շարվածքից են (նկ. 7 ա, բ): Դրանք լինում են ինչպես միաշար, այնպես էլ երկշար՝ միջնամասում լցված միջին և մանր չափերի քարերով: Պատերի բարձրությունը մի քանի տասնյակ սանտիմետրից կարող է հասնել մինչև 2 մ³¹: Մակերեսը 0.1 հեկտարից կարող է հասնել տասնյակ հեկտարների³²: Ուստյուրտյան օդապարուկների շրջապարիսպները հաճախ շարված են ուղղահայաց դիրքով դրված սալաքարերից, որոնց վրա հորիզոնա-

²⁷ **Շախմուրադյան Ս.**, «Անապատի օդապարուկների»..., էջ 34–35:

²⁸ **Barge O. et al.**, Morphological Diversity..., p.168–169, fig. 1.

²⁹ **Barge O. et al.**, The “Desert Kites” of the Ustyurt Plateau, *Quaternary International*, 395, 2016, p. 117.

³⁰ **Kennedy D. et al.**, Kites in Saudi Arabia, *Arabian Archaeology and Epigraphy*, 26, 2015, p. 177–195.

³¹ **Brochier J.-É. et al.**, Kites on the Margins: the Aragats Kites in Armenia, *Paléorient*, 40/1, p. 30, **Barge O. et al.**, Hunting with Kites..., p. 110, **Échallier J., Braemer F.**, Nature and Functions..., p. 42, **Barge O. et al.**, Unity and Diversity..., p. 148; **Barge O. et al.**, The “Desert Kites”..., p. 123–124.

³² **Barge O. et al.**, Morphological Diversity..., fig.4, **Barge O. et al.**, Unity and Diversity..., fig. 11

կան դիրքով այլ սալաքարեր են դրված³³։ Բոլոր տարածաշրջաններում երբեմն որպես շրջապարսպի մաս են ծառայում բլուրների կամ կիրճերի եզրերը, ժայռերը։

Շրջապարսպի առանձին հատվածներում հաճախ տարբեր չափերի ու ձևերի խորշեր (մեծմասամբ՝ եռանկյունաձև) կան, որոնք կարող են լինել բաց և փակ (նկ. 7 գ, դ)։ Դրանց ծայրերին աշտարակներ են կցակառուցված։ Խորշերից գատ՝ շրջապարսպն ունենում է նաև ներքին բաժանմունքներ (նկ. 7 ե, զ) և արտաքին կցակառույցներ (նկ. 7 է, ը), որոնց և օդապարուկի միջև ժամանակագրական հարաբերակցության խնդիրը դեռևս պարզաբանված չէ։

Շրջապարսպի ամենից հետաքրքիր առանձնահատկությունն այն է, որ այն կարող է տարբեր ձևեր ունենալ (նկ. 9)։ Դրանց մի մասը երկրաչափական պատկերների տեսք ունեն (շրջան, կիսաշրջան, ուղղանկյուն, եռանկյունի և այլն), իսկ մյուս մասն անկանոն ձևի են, որոնք երբեմն առարկաների պատկերներ են հիշեցնում, որի շնորհիվ որոշ օդապարուկների հատուկ անվանումներ են տրվել (աստղաձև, կացնաձև, լուսնաձև, բահաձև և այլն)³⁴։

Շրջապարսպների ձևերի բազմազանության պատճառը և դրանց իմաստը դեռևս պատշաճ մեկնաբանություն չեն ստացել։ Քանի որ դրանք կրկնվող են տարբեր տարածաշրջաններում, կարելի է եզրակացնել, որ դրանք կառուցվել են ըստ տիպօրինակի։ Առավել մանրամասն չափագրումներից և վիճակագրական վերլուծություններից հետո հնարավոր կլինի քննարկման առարկա դարձնել ձևերի կրկնության հանգամանքի կապը օդապարուկների գործառույթի և իմաստի հետ։

Աշտարակները

Օդապարուկների շրջապարսպին արտաքին կողմից կցակառուցված են աշտարակներ։ Դրանք ևս անմշակ քարերի չոր շարվածքով են (նկ. 8 ա, բ)։ Պատերը հիմնականում երկշար են՝ միջնամասում լցված միջին և մանր չափերի քարերով։ Ուստյությունում հաճախ սալաքարերով են շարված։ Հատակագծային առումով հիմնականում շրջանաձև, օվալաձև կամ ուղղանկյուն են։

Աշտարակները շրջապարսպի տարբեր հատվածներում են կառուցված, հաճախ՝ խորշերի ծայրերին (նկ. 8 գ-զ)։ Քանակը կարող է տատանվել մեկից մինչև մի քանի տասնյակ։ Ամենից շատ աշտարակներ

³³ Barge O. et al., The “Desert Kites” ..., fig.13.

³⁴ Ягодин В., Стреловидные планировки ..., с. 203, Helms S., Betts A., The Desert “Kites” ..., p. 50, Échallier J., Braemer F., Nature and Functions ..., p. 45, Malkinson D. et al., Seasonal Use..., p. 287, Kennedy D., Kites – New Discoveries ..., p. 148, Շախմուրադյան Ս., «Անապատի օդապարուկների» կառուցվածքը..., էջ 38–39։

ունեն հորդանանյան օդապարուկները, որտեղ դրանց քանակը կարող է հասնել ավելի քան 20-ի³⁵:

Աշտարակները միշտ շրջապարսպից ավելի ցածր դիրքում են գտնվում: Դրանք կառուցված են նախապես արված փոսի մեջ և կարող են ունենալ մինչև 3-4 մ խորություն³⁶: Ներքին տրամագիծը սովորաբար 3-10 մ է: Դրանք գրեթե միշտ փակ են և ելք չունեն ո՛չ դեպի շրջապարսպի ներսը, ո՛չ դեպի դուրս: Առ այսօր պատուհաններով աշտարակի միայն մեկ օրինակ է հայտնի Սիրիայում³⁷:

Հայաստանի օդապարուկների կառուցվածքային հատկանիշները

Հայաստանում հայտնաբերված օդապարուկների գերակշռող մեծամասնությունը դասական կառուցվածք ունեն: Դրանք ունեն զուգամիտող երկու քարաշարեր, մուտք, շրջապարիսպ և աշտարակներ:

Քարաշարեր. Հայաստանյան օդապարուկները, սովորաբար, երկու քարաշար ունեն (օր.[՝] *Անիական 2, Ֆերիկ 1*) (նկ. 6 գ, դ): Երբեմն դրանք ավելի շատ են, սակայն ձգվում են ոչ թե դեպի շրջապարիսպը, ինչպես հարավային տարածաշրջանների օդապարուկների պարագայում, այլ օդապարուկի շրջապարսպից կամ աշտարակից են սկսվում և տարբեր ուղղություններով ձգվում (օր.[՝] *Արագածական 2, 4, Կողբական 6*) (նկ. 6 ե-զ): Լինում են նաև դեպքեր, որ օդապարուկը միայն մեկ քարաշար է ունենում կամ առհասարակ չի ունենում. դա պայմանավորված է այն հանգամանքով, որ կա՛մ դրանք չեն պահպանվել, կա՛մ ուղղորդող գծի դեր ունեն բլուրների եզրերը:

Ինչպես և մնացած տարածաշրջաններում, Հայաստանում նույնպես քարաշարերն անմշակ քարերի ցածր, հոծ շարքեր են, որոնց բարձրությունը, սովորաբար, մի քանի տասնյակ սանտիմետրի է հասնում (նկ. 6 ա, բ): Շարվածքը կարող է լինել և՛ միաշար, և՛ երկշար: Պահպանված երկարությունը 100-1600 մ է, առավել հաճախ՝ 200-700մ³⁸: Քարաշարերի ծայրերին երբեմն որոշ կցակառույցներ կան (օր.[՝] *Արագածական 4*), որոնց գործառույթը և ժամանակագրական հարաբերակցությունը օդապարուկների հետ պեղումների բացակայության պատճառով պարզաբանված չէ:

Օդապարուկների խմբերի առկայության դեպքում մի օդապարուկի քարաշարերը երբեմն միացված են մեկ այլ օդապարուկի քարաշարերին կամ շրջապարսպին՝ ձևավորելով փոխկապակցված խմբեր:

³⁵ Barge O. et al., Unity and Diversity..., p. 148.

³⁶ Եթե տեղանքի առանձնահատկություններից ելնելով աշտարակները բնականից շրջապարսպից ցածր դիրքում են գտնվում, փոս չի արվել:

³⁷ Échallier J., Braemer F., Nature and Functions..., p. 40.

³⁸ Շախմուրադյան Ա., «Անապատի օդապարուկները»..., աղ. 1:

Նման իրողություն փաստագրված է Արագածավանի օդապարուկների համալիրում (օր.՝ *Արագածավան 1-4*):

Մուտքը. Հայաստանյան օդապարուկները հիմնականում երկրորդ և երրորդ տեսակի մուտքեր ունեն: Դրանց մի մասը պարզապես սովորական բացվածք է (օր.՝ *Արտամետ 7, Դաշրադեն 3, Երվանդաշատ 4*) (նկ. 10 ա-գ), իսկ մյուս մասի մուտքը ձևավորված է շրջապարսպի՝ քարաշարերին հարող պատերի դեպի ներս խորանալու արդյունքում (օր.՝ *Կողբավան 19, Մյասնիկյան 4, Քարակերպ 5, նն*) (նկ. 10 դ-թ): Կան նաև փակ մուտքեր (նկ.10 ժ, ի), որոնք, սակայն, հազվադեպ են: Մուտքերի լայնությունը սովորաբար 20-35 մ է:

Շրջապարիսպը. Հայաստանյան օդապարուկները մեկ ընդարձակ շրջապարիսպ ունեն (նկ. 6ա-դ): Հազվադեպ հիմնական շրջապարսպին կցակառուցված են լրացուցիչ՝ ավելի փոքր չափերի շրջապարիսպներ (օր.՝ *Արագածավան 7, Խանջյան 3*) (նկ. 5 ե, գ):

Շրջապարիսպները անմշակ քարերի չոր շարվածքով են: Պատերը միաշար կամ երկշար են՝ միջնամասում լցված միջին և մանր չափերի քարերով (նկ. 7 ա, բ): Երբեմն շրջապարսպի մաս են կազմում բլուրների կամ կիրճերի եզրերը, ժայռերը (օր.՝ *Արտամետ 3, Մյասնիկյան 3*):

Պատերի պահպանված բարձրությունը, սովորաբար, տատանվում է 0.5 – 1.5 մ: *Արագածավան 1* օդապարուկի շրջապարսպի պեղումները վկայում են, որ պատի նախնական բարձրությունը 1.5 մ է³⁹: Շրջապարիսպների 75%-ը 1-3 հա մակերես ունեն⁴⁰: Հանդիպում են նաև մինչև 6.7-7 հա մակերես ունեցող շրջապարիսպներ (օր.՝ *Մայիսյան 1, Խանջյան 9*):

Ինչպես և մնացած տարածաշրջաններում, Հայաստանում ևս օդապարուկների շրջապարսպի տարբեր հատվածներում տարբեր չափերի բաց և փակ խորշեր կան (օր.՝ *Դաշրադեն 2, Նոր Եղեսիա 1*) (նկ. 7 գ, դ), որոնց ծայրերին կցակառուցված են աշտարակներ: Խորշերի հետ մեկտեղ շրջապարիսպն ունենում է նաև ներքին բաժանմունքներ (օր.՝ *Թլիկ 6, Հակկո 3*) (նկ. 7 ե, գ), և արտաքին կցակառույցներ (օր.՝ *Արագածավան 7, Խանջյան 3*) (նկ. 7 է, ը):

Օդապարուկների շրջապարիսպները բազմազան ձևեր են ցուցաբերում: Առավել տարածված են ուղղանկյունաձև (*Արտամետ 7, Դմա-սար 5*) (նկ. 11 ա, բ), եռանկյունաձև (*Վերին Սասունիկ 1*) (նկ. 11 գ), կլորավուն (*Երվանդաշատ 2, Քարակերպ 6*) (նկ. 11 դ, ե), կորացող պատերով սեղանաձև (*Թլիկ 3, Կողբավան 21*) (նկ. 11 գ, է), սլաքաձև (*Հացաշեն 2, Մյասնիկյան 3*) (նկ. 11 ը, թ), բահաձև (*Շենիկ 1, Եղնիկ 1*) (նկ. 11 ժ, ի), մահիկաձև (*Արագածավան 1*) (նկ. 11 յ) շրջապարսպով օդապարուկները:

³⁹ Նույն տեղում, էջ 53-55:

⁴⁰ Նույն տեղում, աղ. 1, դիագ. 5:

Կան նաև մի շարք այլ ձևեր⁴¹ (նկ. 12), սակայն դրանք բարդ է նույնականացնելը կամ որևէ առարկայի հետ նմանեցնելը և դրա հիման վրա վերջիններս բնորոշելը:

Աշտարակները. Աշտարակները արտաքին կողմից կցակառուցված են շրջապարսպին: Դրանք տարբեր հատվածներում են կառուցված, հաճախ՝ խորշերի ծայրերին: Հայաստանյան օդապարուկների մեծ մասը 2-5 աշտարակներ ունեն: Հազվադեպ են մինչև 7-8 աշտարակներ ունեցող օդապարուկները (օր.՝ *Արագածապահ* 4):

Ինչպես և օդապարուկների մնացած բաղադրիչները, աշտարակները ևս անմշակ քարերի չոր շարվածքով են (նկ. 8 ա, բ): Պատերը հիմնականում երկշար են՝ միջնամասում լցված միջին և մանր չափերի քարերով: Հատակագծային առումով հիմնականում շրջանաձև, օվալաձև կամ կլորացող անկյուններով ուղղանկյուն են: Ներքին տրամագիծը, սովորաբար, 3-10 մ է, խորությունը՝ մինչև 3-4 մ: Դրանք փակ են և ո՛չ դեպի շրջապարսպի ներսը, ո՛չ դեպի դուրս ելք չունեն, երբեմն ցածր, դուռ հիշեցնող բացվածք ունեն (*Քարակերպ 10, Հակկո 1*) (նկ. 13):

Օդապարուկների գործառույթը դեռևս պարզաբանված չէ: Ըստ տարածված տեսակետի՝ քարաշարերը ուղղորդող ձանապարհ են ծառայել կենդանիների հոտը դեպի օդապարուկի շրջապարիսպ քշելու համար: Հետո դրանք նետահարվել են աշտարակներում թաքնված որսորդների կողմից: Ըստ մեկ այլ մեկնաբանության՝ աշտարակները չեն ծառայել որպես թաքստոցներ, այլ հենց դրանք են եղել այն թակարդները, որտեղ պիտի կենդանիներն ընկնեին և սպանվեին⁴²:

Եզրակացություն

Այսպիսով՝ հայաստանյան օդապարուկներին բնորոշ են այս տիպի շինություններին հատուկ բոլոր բաղադրիչ տարրերը (քարաշարեր, մուտք, շրջապարիսպ, աշտարակներ) և ունեն այլ տարածաշրջանների օդապարուկներին բնորոշ կառուցվածք: Ինչպես և մնացած տարածաշրջաններում, Հայաստանում ևս օդապարուկները կառուցված են անմշակ քարերի չոր շարվածքով, ունեն մինչև մի քանի կիլոմետր երկարությամբ զուգամիտող քարաշարեր, մուտք, բազմատեսակ ձևերով ու բաժանմունքներով շրջապարիսպ՝ մի քանի հեկտար մակերեսով, և դրան արտաքինից կցակառուցված աշտարակներ: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարելի է եզրակացնել, որ հայաստանյան օդապար-

⁴¹ Նույն տեղում, նկ. 20:

⁴² Helms S., Betts A., The Desert “Kites” ..., p. 49, Kempe S., Al-Malabeh A., Distribution, Sizes, Function and Heritage Importance of the Harrat Al Shaam Desert Kites: the Largest Prehistoric Stoneworks of Mankind? *Abstracts and Proceedings of the 15th International Symposium on Vulcanospeleology*, Zarka: Hashemite University Press, 2012, p. 57-66, Crassard R. et al., The Use of..., p. 1-44.

րուկներն աշխարհագրական լայն տարածում ունեցող շինարարական ավանդույթի մի մասն են:

Իրենց չափերով, կառուցվածքային առանձնահատկություններով և տեսակներով հայաստանյան օդապարուկները ընդհանրություններ ունեն առավելապես հյուսիսմիջագետքյան (Իրաք, Թուրքիա, հյուսիսային Սիրիա) օդապարուկների հետ (նկ. 13), որը պայմանավորված է տարածական հարևանությամբ և ընդհանուր հնամշակությամբ դաշտում գտնվելու հանգամանքով:

Միևնույն ժամանակ՝ հայաստանյան օդապարուկներն ունեն որոշակի կառուցվածքային տարբերություններ՝ համեմատած միջինասիական և հարավային տարածաշրջանների օդապարուկների հետ: Դրանք չունեն բազմաթիվ զուգամիտող քարաշարեր և մի քանի տասնյակ աշտարակներ, ինչպես հորդանանյան օդապարուկները, չունեն իրար մեջ ագուցված մի քանի շրջապարիսպներ, ինչպես արաբական օդապարուկները, և չունեն շրջապարիսպների երկու ծայրերին կցակառուցված ավելի փոքր չափերի շրջապարիսպներ, ինչպես միջինասիական օդապարուկները: Դա, ըստ ամենայնի, պայմանավորված է տարածական հեռավորությամբ և տարբեր բնաաշխարհագրական ու մշակութային միջավայրերում գտնվելով:

Այն հանգամանքը, որ վերոհիշյալ բոլոր տարածաշրջաններում փաստագրված են օդապարուկներ, և դրանց հիմնական կառուցվածքային հատկանիշները նույնական են, վկայում է այն մասին, որ այս կառույցների գործածության ժամանակաշրջանում նշված տարածաշրջանների միջև առկա են եղել որոշակի մշակութային փոխառնչություններ: Սակայն թե ի՞նչ մշակութային իրողությունների արդյունքում են օդապարուկները կառուցվել և սփռվել այսքան մեծ տարածության վրա, դեռևս դժվար է ասել այս շինությունների ժամանակագրության խնդիրների պատճառով:

Իրենց միջանկյալ աշխարհագրական դիրքի, կառուցվածքային հատկանիշների ու տեսակների բազմազանության, հարուստ հնագիտական միջավայրի և պահպանվածության լավ աստիճանի շնորհիվ հայաստանյան օդապարուկների ուսումնասիրությունը մեծ ներուժ է պարունակում և լայն հեռանկարներ ստեղծում վերոհիշյալ խնդիրների, ինչպես նաև այս շինությունների գործառույթի պարզաբանման համար:

TYPES AND STRUCTURAL CHARACTERISTICS OF DESERT KITES IN ARMENIA: A CROSS-REGIONAL PERSPECTIVE

MARIAM SHAKHMURADYAN

*PhD in Archaeology
Institute of Archaeology and
Ethnography, NAS RA*

Abstract

This article examines the types and structural characteristics of desert kites discovered in Armenia within the context of similar archaeological monuments documented in the Near East and Central Asia. Based on fieldwork as well as the analysis of satellite and aerial photographs of kites from various regions, we present the general morphological features of the structural elements of these buildings (stone rows, entrance, enclosure, cells) and their manifestations within Armenia. The main types of Armenian desert kites are categorized according to the forms of their enclosures. By comparing Armenian specimens with similar structures discovered in other regions, this study aims to determine whether these kites form a distinct regional typological group or whether they have parallels in other regions, suggesting a broader architectural tradition and a wider geographical distribution. Armenia is considered a key area for understanding the emergence, development, spread, and potential functions of desert kites.

Keywords: Near East, Armenia, desert kite, megalithic monument, pre-Christian period, morphology, stone row, enclosure, cell, comparative analysis

СТРУКТУРНЫЕ ОСОБЕННОСТИ И ТИПЫ «ПУСТЫННЫХ ВОЗДУШНЫХ ЗМЕЕВ» АРМЕНИИ В МЕЖРЕГИОНАЛЬНОМ КОНТЕКСТЕ

МАРИАМ ШАХМУРАДЯН

*канд. ист. наук
Институт археологии и
этнографии НАН РА*

Аннотация

В статье рассматриваются структурные особенности и типы «пустынных воздушных змеев» или просто «воздушных змеев», обнаруженных в Армении, в контексте аналогичных памятников, зафиксированных в Передней Азии и Центральной Азии. Основываясь на полевых работах, а также на анализе спутниковых и аэроснимков «воздушных змеев» из различных регионов, в статье представлены общие морфологические характеристики структурных элементов этих сооружений (каменные стены, вход, ограждение, башни) и их проявления в Армении. Выделяются основные типы армянских «воздушных змеев» по форме их ограждений. Сравнивая армянские примеры с аналогичными сооружениями, найденными в других регионах, данное исследование ставит цель выяснить, образуют ли они отдельную региональную типологическую группу или имеют параллели с сооружениями других регионов, что позволяет предположить их включение в более широкую архитектурную традицию с более широким географическим распространением. Армения рассматривается как ключевая зона для выяснения вопросов возникновения, эволюции, распространения и возможных функций «воздушных змеев».

Ключевые слова: Передняя Азия, Армения, «воздушный змей», мегалитический памятник, дохристианский период, структура, каменная стена, ограждение, башня, сравнительный анализ

Գրականության ցանկ

1. **Շախմուրադյան Մ.**, «Անապատի օդապարուկների» կառուցվածքի և ձևերի քննություն, *Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ*, հ. 3, 2019, էջ 21–35:
2. **Շախմուրադյան Մ.**, «Անապատի օդապարուկների» կառուցվածքը, ձևերը, թվագրությունը և գործառնությունը, Պատմական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման ատենախոսություն (անտիպ), Երևան, 2023:
3. **Ягодин В.**, Стреловидные планировки Устюрта (опыт историко–культурной интерпретации), *Археология Приаралья*, вып. 5, 1991, с. 64–66.
4. **Akkermans P., Huigens H., Brüning M.**, A Landscape of Preservation: Late Prehistoric Settlement and Sequence in the Jebel Qurma region, Northeastern Jordan, *Levant*, 46/2, 2014, p. 186–205.
5. **al Khasawneh S., Murray A., Thomsen J., Abu–Azizeh W., Tarawneh M.**, Dating a Near Eastern Desert Hunting Trap (Kite) Using Rock Surface Luminescence Dating, *Archaeological and Anthropological Sciences*, 11/5, 2019, p. 2109–2119.
6. **Barge O., Brochier J.–É., Chahoud J., Chataigner C., Régagnon E., Abu–Azizeh W., Crassard R.**, Hunting with Kites in Armenia, *The Gazelle's Dream: Game Drives of the Old and New Worlds* (eds. A. Betts A., P. van Pelt), Sydney: Sydney University Press, 2021a, p. 105–126.
7. **Barge O., Brochier J.–É., Crassard R.**, Morphological Diversity and Regionalization of Kites in the Middle East and Central Asia, *Arabian Archaeology and Epigraphy*, 26/2, 2015a, p. 162–176.
8. **Barge O., Brochier J.–É., Deom J.–M., Sala R., Karakhanyan A., Avagyan A., Plakhov K.**, The “Desert Kites” of the Ustyurt Plateau, *Quaternary International*, 395, 2016, p. 113–132.
9. **Barge O., Brochier J.–É., Régagnon E., Chambrade M.–L., Crassard R.**, Unity and Diversity of the Kite Phenomenon: a Comparative Study between Jordan, Armenia, and Kazakhstan, *Arabian Archaeology and Epigraphy*, 26, 2015b, p. 144–161.
10. **Barge O., Perello B., Régagnon E., Noûs C.**, Desert kites and Aggregated Cells of Mt Aragats (Armenia): Spatial Coincidences? *Quaternary International*, 579, 2021b, p. 29–41.
11. **Bar–Oz G., Nadel D.**, Worldwide Large–Scale Trapping and Hunting of Ungulates in Past Societies, *Quaternary International*, 297, 2013, p. 1–7.
12. **Betts A., Burke D.**, Desert Kites in Jordan: A New Appraisal, *Arabian Archaeology and Epigraphy*, 26, 2015, p. 74–94.
13. **Brochier J.–É., Barge O., Karakhanyan A., Kalantarian I., Chambrade M.–L., Magnin F.**, Kites on the Margins: the Aragats Kites in Armenia, *Paléorient*, 40/1, 2014, p. 25–53.

14. **Chahoud J., Vila E., Balasescu A., Crassard R.**, The Diversity of Late Pleistocene and Holocene Wild Ungulates and Kites Structures in Armenia, *Quaternary International*, 395, 2016, p. 133–153.
15. **Chambrade M.-L., Betts A.**, Kites of Syria, Southern Turkey and Western Iraq, *The Gazelle's Dream: Game Drives of the Old and New Worlds* (eds. A. Betts A., P. van Pelt), Sydney: Sydney University Press, 2021, p. 127–186.
16. **Crassard R., Abu-Azizeh W., Barge O., Brochier J.-É., Chahoud J., Régagnon E.**, The Use of Desert Kites as Hunting Mega-Traps: Functional Evidence and Potential Impacts on Socioeconomic and Ecological Spheres, *Journal of World Prehistory*, 35, 2022, p. 1–44.
17. **Crawford O.**, Notes by Editor, *Antiquity*, 3, 1929, p. 400–401.
18. **Dussaud R.**, Les relevés du Capitaine Rees dans le désert de Syrie, *Syria*, 10, 1929, p. 144–163.
19. **Échallier J., Braemer F.**, Nature and Functions of the Desert Kites: New Data and Hypothesis, *Paléorient*, N 21, 1995, p. 35–63.
20. **Gasparian B., Khechoyan A., Bar-Oz G., Malkinson D., Nachmias A., Nadel D.**, The Northernmost Kites in South-West Asia: the Fringes of the Ararat Depression (Armenia), *Antiquity (Project Gallery)*, 87/336, 2013.
21. **Helms S., Betts A.**, The Desert “Kites” of the Badiyat Esh-Sham and North Arabia, *Paléorient*, N 13/1, 1987, p. 41–67.
22. **Holt A.**, The Future of the North Arabian Desert, *The Geographical Journal*, 62/4, 1923, p. 259–268.
23. **Holzer A., Avner U., Porat N., Horwitz L.**, Desert Kites in the Negev Desert and Northeast Sinai: their Function, Chronology and Ecology, *Journal of Arid Environments*, 74, 2010, p. 806–817.
24. **Karakhanyan A.**, Seismic hazard assessment for the construction site of a new power unit of the Armenian NPP, WP 6. Assessment of surface faulting potential, final report. Unpublished report, Archive of the Ministry of Energy and Management of the Interior of the Republic of Armenia, and Archives of the IAEA, 2010.
25. **Kempe S., Al-Malabeh A.**, Desert Kites in Jordan and Saudi Arabia: Structure, Statistics and Function, a Google Earth Study, *Quaternary International*, 297, 2013, p. 126–14.
26. **Kennedy D., Banks R., Dalton M.**, Kites in Saudi Arabia, *Arabian Archaeology and Epigraphy*, 26, 2015, p. 177–195.
27. **Kennedy D.**, Kites – New Discoveries and a New Type, *Arabian Archaeology and Epigraphy*, 23, 2012, p. 145–155.
28. **Kennedy D.**, Kites in Saudi Arabia, *The Gazelle's Dream: Game Drives of the Old and New Worlds* (eds. A. Betts A., P. van Pelt), Sydney: Sydney University Press, 2021, p. 205–333.
29. **Kirkbride A.**, Desert ‘Kites’, *Journal of the Palestine Oriental Society*, 20, 1946, p. 1–5.

30. **Kobusiewicz M.**, Excavations at Sinai-10: the Kite Site, Romythi locality, *An Archaeological Investigation of the Central Sinai* (eds. F. Eddy, F. Wendorf), Cairo: American Research Center in Egypt, 1999, p. 173–180.
31. **Legge A., Rowley-Conwy P.**, Gazelle Killing in Stone Age Syria, *Scientific American*, 1987, p. 88–95.
32. **Lombard M., Caruana M., van der Valt J., Högberg A.**, The Keimos 3 Desert Kite site, South Africa: An Aerial Lidar and Micro-Topographic Exploration, *Antiquity*, 94/373, 2020, p. 197–211.
33. **Maitland P.**, The ‘Works of the Old Men’ in Arabia, *Antiquity*, 1, 1927, p. 197–203.
34. **Malkinson D., Bar-Oz G., Gasparyan B., Nachmias A., Gershtein E., Nadel D.**, Seasonal Use of Corrals and Game Traps (Desert Kites) in Armenia, *Quaternary International*, 464, 2018, p. 285–304.
35. **Morandi Bonacossi D.**, Desert-Kites in an Aridifying Environment. Specialised Hunter Communities in the Palmyra Steppe during the Middle and Late Holocene, *Studia Chaburensia*, 4, 2014, p. 33–47.
36. **Morandi Bonacossi D., Iamoni M.**, The Early History of the Western Palmyra Desert Region. The Change in the Settlement Patterns and the Adaptation of Subsistence Strategies to Encroaching Aridity: A First Assessment of the Desert Kite and Tumulus Cultural Horizons, *Syria*, 89, 2012, p. 31–58.
37. **Nadel D., Bar-Oz G., Malkinson D., Spivak P., Langgur D., Porat N., Khechoyan A., Nachmias A., Crater-Gershtein E., Katinaa A., Bermatov-Paz G., Nahapetyan S., Gasparyan B.**, New Insights into Desert Kites in Armenia: the Fringes of the Ararat Depression, *Arabian Archaeology and Epigraphy*, 26, 2015, p. 120–143.
38. **Nadel D., Malkinson D., Bar-Oz G., Nachmias A., Avner U., Kolska Horwitz L., Baharav D., Porat N.**, Small, Sparse and Effective: the Negev and Sinai Kites, *The Gazelle’s Dream: Game Drives of the Old and New Worlds* (eds. A. Betts A., P. van Pelt), Sydney: Sydney University Press, 2021, p. 253–304.
39. **Poidebard A.**, Reconnaissance aérienne au Ledja et au Safa, *Syria*, 9, 1928, p. 114–132.
40. **Rees L.**, The Transjordan Desert, *Antiquity*, 3, 1929, p. 389–407.
41. **Rosen B., Perevolotsky A.**, The Function of “Desert Kites” – Hunting or Livestock Husbandry?, *Paléorient*, 24, 1998, p. 107–111.
42. **Shakhmuradyan M.**, The Desert Kites: A New Frontier in the Near Eastern Archaeology, *Proceedings of the Cambridge Annual Student Conference*, Oxford: Archaeopress, 2020a, p. 245–261.
43. **Shakhmuradyan M.**, The Function of Desert Kites: An Analysis of Hunting Theory, *Aramazd*, XIV/1–2, 2020b, p. 1–26.
44. **Skorupka M.**, Les “desert kites” yéménites, *Arabian Humanities*, 16, 2010, p. 5–14.
45. **Zeder M., Bar-Oz G., Rufolo S., Hole F.**, New Perspectives on the Use of Kites in Mass-Kills of Levantine Gazelle: A View from Northeastern Syria, *Quaternary International*, 05/297, 2013, p. 110–125.

Նկարների ցանկ

1. *Արագածավան 4* օդապարուկի օդալուսանկարը, լուսանկարը՝ Ա.Մկրտչյանի:
2. Օդապարուկի հիմնական կառուցվածքային տարրերը, գծանկարը՝ Ա. Գալստյանի
3. Օդապարուկների բաշխվածությունն աշխարհում, քարտեզը՝ Հ. Դանիելյանի, աղբյուրը՝ *Globalkites* նախագիծ
4. Օդապարուկների մուտքերի տեսակների սխեմատիկ վերարտադրություն, գծանկարները՝ Ա. Գալստյանի:
5. Մեկ և ավել շրջապարսպով օդապարուկների սխեմատիկ պատկերներ, գծանկարները՝ Հ. Սահակյանի
6. **ա.** *Թշիկ 3* օդապարուկի քարաշարի մի հատված, նկարը՝ Գ. Ղազարյանի, **բ.** *Գեղրափ 5* օդապարուկի քարաշարի մի հատված, նկարը՝ Գ. Ղազարյանի); **գ-գ.** Երկու և ավել քարաշարերով օդապարուկների սխեմատիկ պատկերներ, գծանկարները՝ Հ. Սահակյանի
7. **ա.** *Գեղրափ 6* օդապարուկի շրջապարսպի մի հատված, նկարը՝ Մ. Շախմուրադյանի, **բ.** *Արագածավան 1* օդապարուկի շրջապարսպի մի հատված, նկարը՝ Տ. Սարիբեկյանի, **գ-դ.** Բաց և փակ խորշերով շրջապարիսպների սխեմատիկ պատկերներ, գծանկարները՝ Հ. Սահակյանի, **ե-զ.** Ներքին բաժանմունքով շրջապարիսպների սխեմատիկ պատկերներ, գծանկարը՝ Հ. Սահակյանի, **է-ը.** Արտաքին կցակառույցով շրջապարիսպների սխեմատիկ պատկերներ, գծանկարները՝ Հ. Սահակյանի
8. **ա.** *Արագածավան 1* օդապարուկի աշտարակները, նկարը՝ Ա.Մկրտչյանի, **բ.** *Արագածավան 1* օդապարուկի աշտարակը՝ պեղված վիճակում, նկարը՝ Լ. Մկրտչյանի, **գ-գ.** Շրջապարսպի նկատմամբ աշտարակների տեղադրության նմուշներ, գծանկարները՝ Հ. Սահակյանի
9. **ա.** Օդապարուկների շրջապարիսպների ձևերի դասակարգումն ըստ Ս. Հելմսի և Ա. Բեթսի (ըստ՝ Helms S., Betts A., 1987, fig. 14), **բ.** Օդապարուկների շրջապարիսպների ձևերի դասակարգումն ըստ Ժ. Էչալիեի և Ֆ. Բոայմերի (ըստ՝ Echallier J., Braemer F., 1995, fig. 13)
10. Հայաստանի օդապարուկների մուտքերի հիմնական տեսակները. պարզ բացվածք (**ա-գ**), շրջապարսպի՝ դեպի ներս խորացող մուտքով (**դ-թ**), գծանկարները՝ Հ. Սահակյանի
11. Հայաստանի օդապարուկների շրջապարիսպների հիմնական ձևերը, գծանկարները՝ Հ. Սահակյանի
12. Հայաստանի օդապարուկների շրջապարիսպների այլ ձևեր, գծանկարները՝ Հ. Սահակյանի
13. *Հակկո 4* օդապարուկի աշտարակն՝ արտաքին մուտք-բացվածքով, նկարը՝ Մ. Շախմուրադյանի: *Քարակերպ 10* օդապարուկի աշտարակն՝ արտաքին մուտք-բացվածքով, նկարը՝ Օ.Բարժի


Ընդունվել է՝ 19.05.2025

Գրախոսվել է՝ 02.06.2025


Հանձնվել է փայ.՝ 11.09.2025







1



2



3





ա



գ



դ



ե

7



բ



զ



է



ը



ա



գ



դ

8





բ




ե




զ





11



12



ա



բ

13